

ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և
առողիտի ամրիոնի ասպիրանտ

ՄՆԱՆԿԱՑՄԱՆ ՈՒՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՍՊԴԵԼՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԻՐԱԾՈՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Շուկայական տնտեսության պայմաններում առանձին կազմակերպությունների ճգնաժամային զարգացումը բնականու երևույթ է: Դրա շնորհիվ սնանկ կազմակերպությունները դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ ֆինանսապես կայունները շարունակում են զարգանալ:

ՀՀ-ում տնտեսական բարեփոխումները սկսվել և շարունակվում են տնտեսության բոլոր հատվածներում՝ խոր ճգնաժամի առկայությամբ: Վերջին 20 տարվա ընթացքում ի հայտ են եկել մի շարք ճգնաժամային դրսություններ և գործընթացներ, որոնց հետևանքով բազմարիվ կազմակերպություններ հայտնվել են ֆինանսական և տնտեսական ծանր իրավիճակում:

Տնտեսավարող սուբյեկտների անվճարունակությունը շուկայական տնտեսությանը բնորոշ երևույթներից է: Ըստ տարածված տեսակետի՝ դա բնուրագրվում է տնտեսական հարաբերությունների համակարգում սուբյեկտի որոշակի բացասական վիճակով, երբ իրավաբանական կամ ֆիզիկական անձն ի վիճակի չէ կատարելու իր վճարային պարտավորությունները կամ, այլ կերպ ասած, անվճարունակ է:

Կան սնանկության բազմարիվ սահմանումներ, բայց առավել հստակ է Ն. Բրելավյակի առաջարկածը: Ըստ նրա՝ սնանկությունը պարտապահի և պարտատերերի միջև վեճերի լուծման քաղաքակիրք ձև է, որը հնարավորություն է տալիս հաշվի առնելու երկու կողմերի շահերն ել, քանի որ սնանկության ձևակերպման արարողակարգերից հետո պարտապահն ազատվում է նախկին գործարարության հետ կապված պարտավորություններից և կրկին հնարավորություն է ունենում իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, իսկ պարտատերը, իր հերթին, ստանում է կորցրած միջոցների մի մասը¹:

Մնանկությունը, ըստ Էության, ճգնաժամի ծայրահեղ փուլն է, երբ կազմակերպությունն ի վիճակի չէ ժամանակին մարելու իր պարտավորություններն ու վերականգնելու վճարունակությունը եկամտի սեփական աղբյուրների հաշվին²: Մնանկությունը կազմակերպության ճգնաժամային զարգացման հետևանք է:

¹ Տե՛ս Բայկինա Ս. Գ., Սчет и анализ банкротства (учеб. пособие). М., 2006, էջ 9:

² Տե՛ս Կյուկինա Ի. Գ., Աստրահանցևա Ի. Ա., Սчет и анализ банкротства (учеб. пособие). М., „Финансы и статистика”, 2004, էջ 19:

Սնանկացման ռիսկի գնահատման խնդիրն արդիական է և կազմակերպության կառավարիչների, և պարտատերերի համար: Այն ընդհանրական, ամփոփ ցուցանիշ է, որը ներկայացնում է խնչպես կազմակերպության ֆինանսական դրույթունը, այնպես էլ դրա կառավարման որակը, որը, վերջին հաշվով, իր արտացոլումն է գտնում ֆինանսական ցուցանիշներում:

Անհրաժեշտ է նշել, որ կազմակերպության ֆինանսական դրույթամբ շահագրգիռ ցանկացած անձ (կառավարիչ, քածնետեր, ներդրող, կրեդիտոր, առողջապահ և այլն) չի բավարարվում ցուցանիշների պարզ, քանակական գնահատմամբ: Որոշում կայացնողը պետք է ինձանա՝ այդ արժեքներն ընդունելի⁹ են և ինչ չափով: Բացի այդ, նա ճգոտում է տրամաբանական կապ ստեղծել ֆինանսական գործակիցների արժեքների և սնանկացման ռիսկի մակարդակի միջև: Սակայն խնդիրը բարդանում է, քանի որ ցուցանիշները բազմաթիվ են, հաճախ փոփոխվում են տարրեր ուղղություններով, հետևաբար՝ որոշում կայացնողը փորձում է առանձին ֆինանսական ցուցանիշներն ու գործակիցներն «անփոփել» մեկ համապարփակ, ընդհանրական ցուցանիշում, որի արժեքների հիման վրա էլ դատում է կազմակերպության ֆինանսական դրույթան և սնանկացման ռիսկի մասին: Այլ կերպ ասած՝ սնանկացման ռիսկի գործակիցը համեստ է զայխ որպես ընդհանրական ցուցանիշ, որն արտացոլում է կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր տեսակի ռիսկերի ազդեցությունը, ամփոփ բնութագրում է ֆինանսական դրույթունը, ուստի սնանկացման ռիսկի ճշգրիտ գնահատման ունակությունը դառնում է կառավարիչների վարքագծի կարևորագույն հատկանիշներից մեկը կազմակերպության գործունեության անընդհատությունն ու արդյունավետությունը ապահովելու տեսանկյունից:


Պետք է նշել, որ ՀՀ-ում դեռևս մշակված չեն մեր տնտեսության առանձնահատկությունները հաշվի առնող ճկուն մոդելներ, թերի են սնանկացման գործընթացի կարգավորման օրենսդրական հիմքերը, իսկ գործնականում սնանկացման ռիսկի գործակիցը գրեթե տեղ չունի կազմակերպության ֆինանսական դրույթունը գնահատող ցուցանիշների համակարգում: Վերը նշվածից էլ հետևում է սնանկացման ռիսկի գնահատման արևմտյան մոդելների կիրառումը ՀՀ-ում: Սակայն ակնհայտ է, որ արևմտյան մոդելները կատարյալ չեն և ունեն որոշակի թերություններ՝ կապված սկզբնական տեղեկատվության սահմանափակումների, սնանկացման ռիսկի գնահատման և կանխատեսման արդյունավետության ու ճշգրտության հետ, իսկ դրանց ներդրումը մեր տնտեսական պայմաններում էլ ավելի է բարդացնում խնդիրը:

Չնայած սնանկացման ռիսկի գնահատման և կանխատեսման տարրեր մոդելների առկայությանը, այս ոլորտում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք էլ անհրաժեշտ է վեր հանել վերլուծության ընթացքում:

ՀՀ-ում դեռևս գոյություն չունի կազմակերպությունների սնանկացման համապատասխան վիճակագրություն, ինչը պայմանավորված է սնանկության ինստիտուտի անավարտ ձևավորմամբ և կայացմամբ, որն էլ, իր հերթին, խոչընդոտում է կազմակերպության հավանական սնանկացումը գնահատող արդյունավետ մոդելների մշակմանը: Մյուս կողմից՝ սնանկացման ռիսկի վերլուծության հիմնական տեղեկատվական աղյուրը կազ-

մակերպությունների ֆինանսական հաշվետվություններն են, որոնք տնտեսության ստվերայնության բարձր մակարդակի պայմաններում չեն արտացոլում իրական պատկերը, չեն բացահայտում կազմակերպությունների տնտեսական գործունեության յուրահատկությունները, ուստի բարդություններ են առաջանում հետազոտությունների ընթացքում:

Սնանկացման ռիսկի գնահատման նպատակով օգտագործվող մոդելները կարելի է ստորաբաժանել 3 խոչոր խմբի՝ վիճակագրական, արհեստական ինտելեկտիվ վրա հիմնված փորձագիտական և տեսական մոդելների (գծապատկեր 1): Սովորաբար սնանկացման ռիսկի գնահատման նոր մոդելի մշակման համար 64% դեպքերում օգտագործվում են վիճակագրական մեթոդները, 25% դեպքերում՝ արհեստական ինտելեկտը, 11% դեպքերում՝ այլ մեթոդներ:



Գծապատկեր 1. Սնանկացման ռիսկի գնահատման մոդելները ըստ մշակման մեթոդների

Սնանկացման ռիսկի գնահատման՝ դիմումինանտային վերլուծության վրա հիմնված ամենահայտնի մոդելները մշակել է Է. Ալտմանը, որոնք լայնորեն օգտագործվում են արտասահմանում, շատ հաճախ ներկայացվում են հայրենական՝ հակածգնաժամային կառավարմանը և ֆինանսական վերլուծությանը վերաբերող դասագրքերում: Սնանկացման ռիսկի գնահատման մոդելների մշակման առաջին լուրջ փորձները կատարվել են 20-րդ դարի 60-ական թվականներին, ինչը կապված էր համակարգչային տեխնիկայի զարգացման հետ: Սկզբնական շրջանում հիմնական շեշտադրումը կատարվել է գործակիցների հաշվարկման ուղղությամբ, որոնց արժեքների հիման վրա էլ կատարվել են անհրաժեշտ հետևողություններ: Այդ գործընթացում կարևոր դերակատարում են ունեցել տնտեսագետներ Ու. Բիկերը, Է. Ալտմանը: Նրանք որպես ելակետ են ընդունել դիմումինանտային վերլուծությունը, իսկ որպես տեղեկույթ օգտագործել են ընտրանքային կարգով խմբավորված այն կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների փաթեթները, որոնց բաժնետոմսերը գնանշվել են արժեքների շուկայում, ինչն էլ ապահովել է արժանահավատության բարձր մակարդակ: Վերլուծության ընթացակարգը հետևյալն է. նախ ձևավորվում է այն ֆինանսական գործակիցների համակարգը, որոնք առավել սերտորեն են կապված սնանկացման ռիսկի հետ (դիցուք՝ դրանք N հատ են), ապա N-չափանի տարածությունում, որի առանցքները տվյալ գործակից-

Աներն են, կառուցվում է հիպերհարթություն, որը վիճակագրական տվյալների հիման վրա տարանշատում է սնանկ և ոչ սնանկ կազմակերպությունները: Այդ հիպերհարթությունը բնութագրում է հետևյալ հավասարումը.

$$Z = \sum_{\emptyset} \alpha_i \times K_i ,$$

որտեղ՝ K_i -ն ի-րդ ֆինանսական գործակիցն է,
 α_i -ն՝ այդ գործակցի կշռային արժեքը:

Սնանկացման ռիսկի գնահատման հիմնախնդիրը գիտական լայն շրջանակների ուսումնասիրության կենտրոնում հայտնվեց Բիվերի (1966 թ.) և Ալտմանի (1968 թ.) հետազոտություններից հետո: Ակզրնական շրջանում գրեթե բոլոր ուսումնասիրությունները հենվում էին ֆինանսական ցուցանիշների վրա: Ավելի ուշ շրջանում արդեն սնանկացման ռիսկը հանդես էր գալիս որպես անկախ փոփոխական, այլ ոչ թե կախյալ ցուցանիշ: Մի շարք հեղինակներ էլ փորձեցին կատարելագործել Ալտմանի, ինչպես նաև Օլսնի մոդելները՝ դրանցում ներառելով առանձին ֆինանսական գործակիցներ:

Սնանկացման ռիսկի գնահատման ժամանակ ավելի հաճախ օգտագործվում է 1968 թվականին Ալտմանի առաջարկած հիմք գործակիցների վրա հիմնված մոդելը³.

$$Z = 1.2 \times K_1 + 1.4 \times K_2 + 3.3 \times K_3 + 0.6 \times K_4 + 1.0 \times K_5$$

- որտեղ՝ K_1 - սեփական ընթացիկ ակտիվներ / ակտիվներ,
 K_2 - չբաշխված շահույթ / ակտիվներ,
 K_3 - շահույթ մինչև հարկումը / ակտիվներ,
 K_4 - սեփական կապիտալի շուկայական արժեք / պարտավորություններ,
 K_5 - իրացումից հասույթ / ակտիվներ:

Այս գործակցի սահմանային արժեքը 1.8 է, որը վկայում է սնանկացման բարձր ռիսկի մասին: 1.8-ից 2.7-ի դեպքում սնանկացման հավանականությունը մեծ է, 2.7-ից 3.0-ի դեպքում՝ հնարավոր, իսկ դրանից ավելի լինելու դեպքում՝ փոքր: Որոշ հեղինակներ 1.8-ից 2.9-ն ընկած միջակայքն անվանում են «անորոշության տիրույթ», որտեղ հնարավոր չէ հստակ որոշել՝ կազմակերպությունը կսնանկանա՞ թե՞ ոչ:

Կան մի շարք հաճագամանքներ, որոնք ստիպում են մտածել սնանկացման ռիսկի գնահատման՝ ֆինանսական հաշվետվությունների հենքի վրա կառուցված մոդելների արդյունավետության և նպատակահարմարության մասին: Նախ՝ սնանկացման ռիսկի գնահատման մոդելների հիմնական խնդիրը ապագա իրադարձությունների առավել ճշգրիտ կանխատեսումն է, այսինքն՝ կազմակերպությունն արդյոր կսնանկանա՞ գալիք մի քանի տարվա ընթացքում, թե՝ ոչ: Մինչդեռ ֆինանսական հաշվետվությունների նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինան-

³ Corporate Financial Distress and Bankruptcy, Altman E.I., E.Hotchkiss, Third edition, John Wiley & Sons, Inc., 2006, p. 241.

սական արդյունքների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է արդեն ավարտված հաշվետու ժամանակաշրջանի առնչությամբ, ուստի դրանք չեն պարունակում կազմակերպության՝ գալիք մի քանի տարվա ֆինանսական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Բացի այդ, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս դեկավարությունը պետք է գնահատի կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը, այլ կերպ ասած՝ դրանք պետք է պատրաստվեն ըստ գործունեության անընդհատության սկզբունքի (going-concern), եթե դեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու կազմակերպությունը լրացնելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը (այդ թվում՝ նաև սնանկացման հետևանքով): Այսպիսով՝ ֆինանսական հաշվետվությունների տվյալների օգտագործումը սնանկացման ռիսկի ճշգրիտ գնահատման և կանխատեսման մոդելի մշակման համար ի սկզբանե սահմանափակվում է հենց այդ հաշվետվությունների կազմման և օգտագործման նպատակներով:

Գոյություն ունի սնանկացման ռիսկի կանխատեսման երկու մոտեցում: Առաջինը հիմնվում է ֆինանսական տվյալների վրա և ներառում է մի շարք առանցքային գործակիցներ, օրինակ՝ Ալտմանի, Տաֆլերի, Լիսի մոդելները, ինչպես նաև հաշվապահական հաշվեկշռի կազմի և կառուցվածքի վերլուծության արդյունքներն ու կազմակերպության ֆինանսական դրության վերաբերյալ անհրաժեշտ եզրահանգումներ: Երկրորդ մոտեցումը ելնում է արդեն սնանկացած կազմակերպությունների տվյալներից, եթե դրանք համեմատվում են ուսումնասիրվող կազմակերպության համապատասխան ցուցանիշների հետ:

Առաջին մոտեցումը, որմ, անշուշտ, ավելի արդյունավետ է սնանկացման ռիսկի գնահատման տեսանկյունից, ունի երեք հիմնական թերություն: Նախ՝ կազմակերպությունները, որոնք ֆինանսական դժվարություններ ունեն, ամեն կերպ փորձում են հետաձգել իրենց ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը, հետևաբար՝ որոշ արժեքավոր տեղեկություններ կարող են անհասանելի լինել նույնիսկ տարիների ընթացքում: Երկրորդ՝ եթե նույնիսկ այդ տվյալները հրապարակվում են, կարող են վերափոխված լինել՝ իրական խնդիրները թաքցնելու և տեղեկատվությունն օգտագործողներին նոլորեցնելու նպատակով: Այս պարագայում պահանջվում է հատուկ հմտություն՝ վերափոխված տվյալների համախումբն առանձնացնելու և դրանց արժանահավատության մակարդակը գնահատելու համար: Երրորդ խնդիրն այն է, որ որոշ ֆինանսական գործակիցներ կարող են վկայել կազմակերպության անվճարունակության մասին, մինչդեռ մյուսները՝ իմք տալ եզրակացնելու ֆինանսական կայունության կամ, նույնիսկ, որոշակի առաջընթացի մասին: Գործնականում այդպիսի իրավիճակներ հաճախ են հանդիպում, և այս պարագայում ևս զգալի փորձ է պահանջվում բուն սնանկության ոլորտում, ինչպես նաև անհրաժեշտ է հետազոտվող կազմակերպության ճյուղային և ներկազմակերպական առանձնահատկությունների խմացություն:

Սնանկացման ռիսկի գնահատման արևմտյան մոդելների թերություններից մեկն էլ այն է, որ դրանք հաշվի չեն առնում սնանկացման արտաքին

գործոնների ազդեցությունը, մինչդեռ հայտնի փաստ է, որ կազմակերպությունների սնանկացումը 1/3-ով պայմանավորված է հենց արտաքին գործոններով: Սնանկացման ռիսկը ակնառու կերպով բնորոշող գործոնների շրջանակը բավականին ընդգրկուն է, ինչն էլ պայմանավորում է մոդելների կատարելագործման անհրաժեշտությունն ու դրանցում այնպիսի տնտեսական ցուցանիշների ներառումը, ինչպիսիք են գնաճի մակարդակը, ՀՆԱ աճի տեմպը, արտաքույթի փոխարժեքը, վերաֆինանսավորման տոկոսադրույքը և այլն:

Սնանկացման ռիսկի գնահատման արևմտյան մոդելների կիրառումն աննպատակահարմար է նաև այն պատճառով, որ մի շարք ֆինանսական ցուցանիշների բովանդակությունն ու ձևավորման կարգը, ինչպես նաև դրանց տեղին ու դերը կազմակերպության ֆինանսական դրույթան բնորոշման տեսանկյունից էականորեն տարբերվում են ՀՀ-ում և այն երկրներում, որտեղ մշակվել են դրանք: Այսպես՝ Ալտմանի հնգագործոն մոդելի K4 հարաբերակցության արժեքը (սեփական կապիտալի շուկայական արժեք/պարտավորություններ) հնարավոր չէ որոշել կապիտալի շուկայական արժեքի հաշվարկման մեխանիզմի բացակայության պատճառով, իսկ կազմակերպությունների ճնշող մեծամասնությունն էլ բաժնետիրական ընկերություններ չեն: Ու թեև դա կարելի է ներկայացնել շահարաժինների գումարի՝ բանկային ավանդների միջին տարեկան տոկոսադրույքի նկատմամբ հարաբերակցության և բաժնետոմսների միջին տարեկան բանակի արտադրյալի տեսքով, այնուամենայնիվ, այս հաշվարկմերը մոտավոր են և կարող են հանգեցնել էական սխալների:

Անհրաժեշտ է նշել, որ Ալտմանի հնգագործոն մոդելում ներառված անկախ փոփոխականների բվային արժեքները հայրենական և ամերիկյան կազմակերպությունների դեպքում էապես տարբերվում են միմյանցից: Մասնավորապես՝ զգալի տարբերություն է նկատվում K1 հարաբերակցության (սեփական ընթացիկ ակտիվներ/ակտիվներ) պարագայում, ինչը բացատրվում է ՀՀ կազմակերպությունների գերակշիռ մասում պարտավորությունների կառուցվածքում ընթացիկ պարտավորությունների բարձր տեսակարար կշռով, այն դեպքում, եթե ամերիկյան կազմակերպությունները հիմնականում աշխատում են երկարաժամկետ բանկային վարկերի հաշվին, ինչն էլ մեծացնում է K1 գործակցի ընդհանուր արժեքն ու նշանակությունը Հաշվարկում:

ՀՀ կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների շարքը կարելի է դասել նաև տեղեկատվական համակարգերի անկատարությունը, որն անորոշության և անվատահության մթնոլորտ է ձևավորում հավանական ներդրողների շրջանում, հարկային մեծ թերզ, որը ստիպում է ձեռնարկատերերին բացընել ֆինանսատեսական գործունեության իրական արդյունքները, անշարժ գույքի շուկայի անկատարությունը, որն էլ խոչընդոտում է հիմնարկային վարկավորման ընդլայնմանը: Բացի այդ, ՀՀ-ում այլ են հիմնական միջոցների հատույցի, Էներգատարության, աշխատանքի արտադրողականության ցուցանիշները:

Անդրադասարկով Ալտմանի հնգագործոն մոդելի հիմքում առկա փոփոխականների միջև գծային անկախության ստուգմանը՝ նշենք, որ կա-

տարվել է կոռելյացիոն վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ալտմանի հնգագործոն մոդելում ներառված փոփոխականների միջև կոռելյացիոն կապերը

	K1	K2	K3	K4	K5
K1	1.00	-0.11	0.15	0.15	0.02
K2	-0.11	1.00	0.81	0.72	0.68
K3	0.15	0.81	1.00	0.60	0.84
K4	0.15	0.72	0.60	1.00	0.36
K5	0.02	0.68	0.84	0.36	1.00

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ Ալտմանի հնգագործոն մոդելում դիտվում է զույգային կոռելյացիոն կախվածություն K2 և K3, K2 և K4, K3 և K5 փոփոխականների միջև, որը գերազանցում է սահմանային 0,70 արժեքը, մինչդեռ փոփոխականների միջև անկախությունը դիսկրիմինանտային մոդելների անհրաժեշտ նախապայմանն է:

ՀՀ-ում Ալտմանի հնգագործոն մոդելի կիրառման նպատակահարմարությունը պարզելու համար 40 արտադրական կազմակերպությունների 2010 և 2011 թվականների ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կատարվել է համալիր վերլուծություն: Ընտրված 40 կազմակերպությունները ներկայացնում են տնտեսության հանրագործական արդյունաբերության ու բացահանքերի շահագործման և մշակող արդյունաբերության ճյուղերը:

Ընդհանրապես սնանկացման ռիսկի գնահատման մոդելների արդյունավետությունը որոշվում է հետևյալ կերպ. եթե մոդելի կանխատեսման հորիզոնը մեկ տարի է, ապա առանձնացվում է սնանկ և ոչ սնանկ կազմակերպությունների համախումբ, այնուհետև մոդելի կիրառմանը յուրաքանչյուր կազմակերպության համար հաշվարկվում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ սնանկացման ռիսկի գործակիցը և ենթադրվում՝ կազմակերպությունը սնանկ է, թե ոչ: Վերլուծության արդյունքները համեմատվում են հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմակերպությունների իրական վիճակի հետ:

Քանի որ Ալտմանի մոդելը հնարավորություն է տալիս սնանկացման ռիսկը գնահատելու առաջիկա մեկ տարվա համար 80-90% ճշգրտությամբ, ապա որպես ելակետային տվյալներ վերցվել են հետազոտվող կազմակերպությունների 2010 թվականի ֆինանսական հաշվետվությունների տվյալները, գնահատվել է սնանկացման ռիսկը 31.12.2010-ի դրությամբ՝ ստացված արդյունքները համեմատելով 31.12.2011-ի դրությամբ այդ նույն կազմակերպությունների ֆինանսական դրության գնահատման արդյունքների հետ (Վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում):

Աղյուսակ 2


Սնանկացման ռիսկի գնահատման արդյունքներն ըստ Ալտմանի հնգագործող մոդելի

N	Հետազոտված կազմակերպությունների գործունեության տեսակը	Սնանկաց- ման ռիսկի գործակիցը	Ֆինանսական դրույթան անվիճու գնա- հատականը
1	Մետաղական հանքաքարի արդյունահանում	1.25	անվճարունակ է
2	Մետաղական հանքաքարի արդյունահանում	0.08	վճարունակ է
3	Մետաղական հանքաքարի արդյունահանում	1.91	վճարունակ է
4	Սննդամբերքի արտադրություն	1.50	անվճարունակ է
5	Սննդամբերքի արտադրություն	-0.50	անվճարունակ է
6	Սննդամբերքի արտադրություն	0.75	վճարունակ է
7	Սննդամբերքի արտադրություն	1.23	վճարունակ է
8	Սննդամբերքի արտադրություն	6.94	վճարունակ է
9	Սննդամբերքի արտադրություն	1.19	վճարունակ է
10	Խմիչքների արտադրություն	3.06	վճարունակ է
11	Խմիչքների արտադրություն	1.30	վճարունակ է
12	Խմիչքների արտադրություն	2.39	անվճարունակ է
13	Խմիչքների արտադրություն	2.24	վճարունակ է
14	Ծխախոտային արտադր. արտադրություն	6.61	վճարունակ է
15	Ծխախոտային արտադր. արտադրություն	11.75	վճարունակ է
16	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	2.58	անվճարունակ է
17	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	0.09	անվճարունակ է
18	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	3.71	վճարունակ է
19	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	-4.00	անվճարունակ է
20	Հիմնական մետաղների արտադրություն	4.89	վճարունակ է
21	Հիմնական մետաղների արտադրություն	17.32	վճարունակ է
22	Հիմնական մետաղների արտադրություն	7.86	վճարունակ է
23	Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	6.59	վճարունակ է
24	Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	2.94	վճարունակ է
25	Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	-4.14	անվճարունակ է
26	Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	1.67	վճարունակ է
27	Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	3.91	վճարունակ է
28	Էլեկտրական սարքավորանքի արտադր.	1.51	անվճարունակ է

29	Էլեկտրական սարքավորանքի արտադր.	2.59	Վճարունակ է
30	Էլեկտրական սարքավորանքի արտադր.	8.52	Վճարունակ է
31	Էլեկտրական սարքավորանքի արտադր.	0.73	Վճարունակ է
32	Էլեկտրական սարքավորանքի արտադր.	1.32	Վճարունակ է
33	Մեքենաների և սարքավորանքի արտադր.	2.33	անվճարունակ է
34	Մեքենաների և սարքավորանքի արտադր.	0.57	Վճարունակ է
35	Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրություն	3.32	Վճարունակ է
36	Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրություն	0.52	Վճարունակ է
37	Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրություն	1.27	Վճարունակ է
38	Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրություն	0.83	անվճարունակ է
39	Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրություն	0.23	Վճարունակ է
40	Էլեկտրականության, գազի, գոլորշու մատակարարություն	0.53	Վճարունակ է

Սնանկացման ռիսկի վերլուծության կարևորագույն խնդիրներից մեկը «սնանկություն» հասկացության հատակ բնորոշումն է, ինչը վճռական նշանակություն ունի ելակետային տվյալների հիման վրա կազմակերպություններին «սնանկ» կամ «ոչ սնանկ» խմբերում դասակարգելու և մողելի արդյունավետությունը պարզելու համար: Մասնավորապես, հետազոտողների մի մասը կազմակերպությունը համարել է սնանկ՝ դատարանի կողմից կայացված վճռի հիման վրա, մի մասն էլ սնանկությունը դիտարկել է ըստ կազմակերպությունում ֆինանսական դժվարությունների առկայության, անվճարունակության: Այս հանգանանքը ևս խոշնորություն է տարբեր մոդելների արդյունավետության համեմատական վերլուծությանը: Մենք ենք ընդունել կազմակերպությունների ֆինանսական դրության ամփոփ գնահատականն ու վճարունակության մակարդակը:


Ստորև ներկայացված են սնանկացման ռիսկի գնահատման արդյունքները.



Գծապատկեր 2. Կազմակերպությունների տարբերակում ըստ սնանկացման ռիսկի մակարդակի

Ըստ գծապատկեր 2-ի՝ հետազոտվող կազմակերպություններից 21-ը (52.5%) սնանկացման եզրին են, 6-ը գտնվում են «անորոշության տիրույթում», իսկ մնացած 13-ին (32.5%) սնանկացման վտանգ չի սպառնում:

Այլուսակ 2-ում ներկայացված՝ Ալտմանի մոդելով հաշվարկված սնանկացման ռիսկի արժեքների և հետազոտվող կազմակերպությունների ֆինանսական դրույթան զնահատման արդյունքների համեմատության արդյունքում պարզ դարձավ (գծապատկեր 3), որ Ալտմանի հնգագործոն մոդելի կանխատեսման ճշտությունը մեկ տարվա համար կազմում է 61.8%, ինչը փաստում է հայաստանյան պայմաններում այս մոդելի օգտագործման արդյունավետության ցածր մակարդակի մասին: Ավելորդ չեն նաև, որ հետազոտվող կազմակերպությունները հաջողությամբ շարունակում են իրենց գործունեությունն առ այսօր:



Գծապատկեր 3. Ալտմանի հնգագործոն մոդելի արդյունավետությունը ՀՀ-ում

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ սնանկացման ռիսկի գնահատման արևմտյան մոդելները ՀՀ-ում կիրառելի չեն, չեն համապատասխանում ՀՀ կազմակերպությունների գործունեության առանձնահատկություններին և պայմաններին, հանգեցնում են էական սխալների, շեղումների, աղավաղում են իրական պատկերն ու խոչներտում հիմնավոր եզրահանգումների կատարմանը:

АРТУР САРГСЯН

Аспирант кафедры „Управленческого учета и аудита“ АГУЭ

Западные модели оценки риска банкротства и возможность их применения в РА.- Проблема прогнозирования банкротства на предприятиях приобретает все большее значение с развитием в Армении рыночной экономики. Банкротство, по сути, является тем инструментом, с помощью которого силы конкуренции определяют и выводят с рынка слабейшие предприятия, позволяя экономике развиваться динамично и эффективно, избавляясь от убыточных предприятий. При этом владельцы каждого конкретного предприятия, его партнеры заинтересованы в обратном – эффективном и как можно более длительном функционировании

предприятия. И возможность прогнозировать наступление кризисных ситуаций и банкротства позволяет не только повысить информированность при принятии решений, но и способствовать предотвращению кризиса. Это в свою очередь, вызвало появление множества моделей, основывающихся на различных данных, выдвигающих множество критериев. Но существующие западные модели сами по себе не идеальны и имеют определенные недостатки, касающиеся как ограничений, накладываемых на характер исходной информации, так и точности прогнозирования, их внедрение в отечественных условиях лишь добавляет проблем. В статье определены недостатки основных существующих моделей, выявлены наиболее существенные препятствия на пути их адаптации к армянским условиям и были сделаны выводы относительно целесообразности применения этих моделей в армянской практике.

ARTHUR SARGSYAN

*Post - graduate at the Chair of
„Managerial Accounting and Audit” at
ASUE*

Western Models of Estimating the Risk of Bankruptcy and the Possibility of Their Implementation in the RA.- The problem of predicting bankruptcy has become increasingly important with the development of Armenia's economy. Bankruptcy, in fact, is the instrument by which the forces of competition determine and eliminate weak companies from the market, allowing the economy to grow rapidly and efficiently, getting rid of unprofitable businesses. In this case the owners of each individual company and its partners are interested in the opposite - the efficient and the best possible long-term operation of the enterprise. And the ability to predict the onset of crisis and bankruptcy cannot only raise awareness of decision-making, but also help prevent the crisis. This, in turn, gave rise to a variety of models based on different data, nominating a number of criteria. But the existing western models are not perfect and have some shortcomings, regarding both the limitations on the nature of the initial information and the accuracy of prediction, their introduction into the Armenian conditions only adds to the problems. The paper identifies the major deficiencies of the existing models, detects the most significant obstacles to their adaptation to Armenian conditions and conclusions are drawn regarding the advisability of applying these models in the Armenian practice.